

ֆաղափական ծրագիր է առաջարկում նոր խաչակիր արշարանքի համար: Ըստ այս ծրագրի խաչակիրներին արևելից պիտի աջակցեին մոնղոլները, իսկ կենտրոնից՝ դաշնակից Հայաստանն ու Վրաստանը: Այդ ծրագիրն, ի հարկէ, գլուխ չեկաւ, որովհետեւ նախ Պապը անգոր էր ստֆի հանելու Եւրոպան Հայաստանի եւ Վրաստանի ազատութեան համար, իսկ երկրորդ՝ գլխաւորապէս այն պատճառով, զր հաշի չէին առնած Հայաստանի այն ժամանակայ պայմանները, նրանք էին դասերի իրական փոխարարներութիւնները*):

Վերջացնելով այս մի քանի դիտողութիւնները՝ ես պիտի փակեմ ինչով որ սկսեցի. պ. Յակոբեանը գեղեցիկ ծառայութիւն է մատուցել հայ ժողովրդին՝ հրկարաւորութիւն տալով ծանօթանալ արեւմտեան նախապահորդների հաղորդած տեղեկութիւններին Հայաստանի մասին: Շատ ցանկալի է, որ այս լաւ եւ օգտակար գիրքը լայնօրէն տարածուի հասարակութեան բոլոր խտերում:

Յ. Զ.

« ԱՆԴՐԿՈՎԿ. ԽՈՐՀՐԴ. ԴԱՇՆ. ԸՆԿԵՐՎ. ՀԱՆՐ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ 1927 Թ. ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆԸ », 1929, Թիֆլիս (ոուսերէն) :

Գրախօսականի համար թերեւս ուշ է այս հատորի մասին

խօսելը, բայց ի նկատի ունենալով, որ խորհրդային հրատարակութիւնները շատ դժարութեամբ են ստացում արտասահմանում, աւելորդ չենք համարում վեր առնել այս գրքի մի քանի կէտերը, որոնք այժմէական են եւ այսօրայ համար :

Շուրջ 400 էջոց մեծածաւալ այս հատորը լեցուն է փաստական նիւթերով, թւերով, վիճակագրական աղիւսակներով, որոնց մեծ մասն արդէն կորցրել է այժմէականութիւնը. կոլխոզը հիմնովին փոխել է Անդրկովկասի ժողովրդական տնտեսութեան կառուցածքն ու բնոյթը, եւ այն ինչ որ կար 1927ին՝ այլեւս հեռաւոր պատմութիւն է այսօր : Հետաքրքրական եւ այժմէական են գրքի միայն մի քանի մասերը, մեզ համար, մանաւանդ, այն էջերը, ուր խօսուում է Անդրկովկասի սահմանավեճերի եւ նոր սահմանագծումների մասին :

Դուրս է գալիս, որ սուսիկփուսիկ տեղի են ունեցել նոր սահմանագծումներ, եւ Հայաստանի *գոյութիւն ունեցող սահմանները, նորից մկրատել են յօգուտ հարեւանների*: « 1927թ. 20 յունիսին, կարդում ենք գրքում, Անդրգործկումին կից ըստեղծում է «Անդրկովկասի հանրապետութիւնների միջուկ հողային, անտառային եւ ջրաբաշխագործման վեճերը լուծող մի յանձնաժողով» հետեւեալ կագ-

*) Հեթումի գրածքը քարգմանած է Հ. Մկրտիչ Աւգերեանի կողմից — *Հեթում Պատմիչ Թաթարաց, Վենետիկ, 1842*: Դժբախտաբար, Աւգերեանը դուրս է ձգել թէ Հեթումի ծրագիրը եւ թէ, առհասարակ, գրածքի վերջին ամբողջ ֆաղափական մասը, որ մինչեւ այսօր էլ մնում է գրեթէ անմատչելի հայ ընթերցողի համար :

մով. նախագահը եւ երկու անդամները նշանակուում են Անդրկովկասի Գործադիր Կոմիտէի նախագահութեան կողմից. յանձնաժողովի մէջ մտնում են նաեւ երկուական ներկայացուցիչներ ամէն մի հանրապետութիւնից : Այդ յանձնաժողովը ունի իր մըշտական պաշտօնէութիւնը : Յանձնաժողովի պարտականութիւնն է գծել վարչա-տնտեսական սահմանները Անդրկովկասեան հանրապետութիւնների միջեւ, կարգադրել ծագող վէճերը հողային և անտառային սեփականութեան շուրջը սահմանակից վայրերում, ինչպէս նաեւ վէճերը այն արօտատեղերի օգտագործման շուրջ, որոնք գտնւելով մի հանրապետութեան սահմաններում՝ օգտագործւում են ուրիշ հանրապետութիւնների կողմից» :

Թէ ինչո՞ւ է 6-7 տարի յետոյ միայն այդ հարցը մէջտեղ եկել, գեկուցումը բացատրում է հետևեեալ ձևով. քէեւ 1921-23-ին հանրապետութիւնների պատասխանատու ներկայացուցիչների խորհրդաժողովներում այդ սահմանագծումը տեղի էր ունեցել, բայց որովհետեւ սահմանագծումը հիմնւած է եղել հիմնգ վերստանոց քարտէսի վրա, իրական սահմաններ չէին ապահովւած. այդ պատճառով քիւրիմացութիւնները բնակչութեան եւ գաւառների վարչութիւնների միջեւ շարունակուում էին : Այդ գաւառների հողաշինարարութիւնը կամ լուում էր քիւրիմացութիւնների մասին (Ղազախի, Դիլիջանի գաւառներ) եւ կամ քէղանդաղում էր, օրինակ, գոյութիւն ունեցող եւ հաշւեյարդարի չենքարկւած հակառակութիւն-

ները Նախիջեւանի եւ Հայաստանի միջեւ : Յատկապէս սուր է իրական սահմանագծումը այն գաւառներում, որոնք խորհրդայնացումից յետոյ ազգագրական տեսակէտից բաժանւել են (Ղազախի եւ Դիլիջանի, Քիւրդիստանի եւ Զանգեզուրի, Բորչալուի եւ Լոռի Փամբակի) : Տեսալ ժամանակաշրջանում այդ աշխատանքները կատարւել են Ղազախ-Դիլիջանի, Քիւրդիստանի-Զանգեզուրի, Ախալքալախի եւ Լեհի-նականի գաւառներում» :

Աշխատանքների քանակագեայ արդիւնքների մասին շատ մշուշապատ են գրում տրւած տեղեկութիւնները : Չի ասւած, քէ ի՞նչ ձեւով են լուծւած կարեւոր հարցերը :

Առաջին հերթին Դիլիջանի գաւառի Լայաքենդ գիւղից կըտւել է 50,8 հեկտար հողամաս յօգուտ Ադրբէջանի : Այսպիսով, պարզւում է, որ 1917ին բշւած և կոտորւած Արարատ գիւղի հողամասը ամբողջովին տրւած է Ադրբէջանին, քէեւ հանրապետութեան շրջանին Արարատ գիւղը Հայաստանի սահմաններում էր եւ բազմաքիւ հայ-ազրբէջանեան վէճերի ընթացքին այդ խընդիրը որեւէ վէճի առարկայ չի եղել նոյն իսկ մուսուաքականների կողմից :

Հինգ վերստանոց քարտէզի պատրւակով վերականգնւել են քուրք քոչւորների ցարական շրջանի իրաւունքները : Հակառակ որ «11 յուլ. 1924թ. համաձայնութիւնը հաստատւած էր Անդրկովկ. Գործ. Կոմիտէի կողմից, վէճերը քոչւորների մէջ անվերջ շարունակուում էին : 1928ի ամառը Անդրկովկասի հողային

յանձնաժողովի աշխատակիցները վերջնական համաձայնութիւն կայացրին կողմերի, այսինքն՝ Զանգեզուրի եւ Քիւրդիստանի գաւառների միջեւ: Սահմանագծւեց 70 եւ կէս կիլոմետր տարածութիւն: Այդ ատխատանքի ընթացքին կանգնեցրին 32 սահմանային նշաններ»: Զանգեզուրի եւ Քիւրդիստանի գաւառների Դիզի և Մալիբէգուրի շրջանների տասը սահմանակից գիւղերում գոյութիւն ունէին վէներ 1.163,5 հեկտար հողամասի համար: Հարցը քննւեց տեղում *Ստորուայի* (վրացի) նախագահած մի յանձնաժողովում 1927ին եւ վընուեց յանձնաժողովի 1927 նոյեմբեր 26ի նիստում: Այս որոշումը իրագործւեց, 27 կիլոմետր երկարութեամբ սահմանը որոշւեց եւ վնուեց 76 սահմանային նշաններ կանգնեցնել:

Քորչալուի եւ Լոռի-Փամբակի գաւառների միջեւ գոյութիւն ունէին վէներ 23.000 հեկտար հողամասերի առթիւ: Հանրապետութիւնների հողային գործավարները Եակուրովի նախագահութեամբ (թուրք) 1928թ. 10 օգոստ. նիստում համաձայնութեան եկան վիճելի հարցի վընուման ընդհանուր սկզբունքների մասին: 10 օգ. համաձայնութեան հիման վրա Հողային Յանձնաժողովի աշխատակիցները մանրամասն քննութիւն կատարեցին եւ հաւաքեցին անհրաժեշտ նիւթերը 148 կիլոմետր վարչական տնտեսական սահմանի համար: Այդ աշխատանքի ընթացքում հրապարակ եկան 7 վիճելի հողամասեր Քորչալուի 5 գիւղերի եւ Լոռի-Փամբակի 5 գիւղերի միջեւ:

Որովհետեւ սահմանային վիճելի խնդիրների քննութիւնը ուշացաւ, Անդր. կենտր. Գործ. կոմիտէի նախագահութիւնը ըստեղծեց յատուկ մի յանձնաժողով ժող. կոմիսարների հարուստների նախագահներից, որոնց առաջարկւեց երեք ամսայ ընթացքում հաշւեյարդարի ենթարկել բոլոր վէները սահմանակից շրջաններում: Այս յանձնաժողովը 29 յունւ. մինչեւ 2 փետր. 1929թ. համաձայնութեան եկաւ հետեւեալ հարցերի վերաբերմամբ.

1) Ղազախի եւ Դիլիջանի գաւառների միջեւ վիճելի Շինիխ Այլումի շրջանի մասին:

Այս շրջանն էլ նոր է վիճելի դարձել: Բոլշեւիկեան բարբառով « դաշնակ-մուսաւաքականների » միջեւ վէն չի եղել այդ շրջանի մասին, որ Հանրապետութեան առաջին օրից սկսած Հայաստանի Դիլիջան գաւառի մասն էր կազմում: Թէ բոլշեւիկները ի՞նչ են վնուել յայտնի չէ:

2) Քիւրդիստանի եւ Դարալագեթագի գաւառների միջեւ Ալլագեթօլլար 12000 դեսատին արօտատեղերի մասին: Այդ տեղերը նոյնպէս Հայաստանի սահմաններում են եւ Ագրբէջանը պահանջում է իրեն միացնել:

3) Զանգեզուրի եւ Քիւրդիստանի միջեւ ամառային արօտատեղերում վարչա - տնտեսական սահմանների մասին:

4) Զէբրայիլի եւ Մեդրիի գաւառների միջեւ Նիւվատի, Այնաձորի եւ Տուղուտ գիւղերի մասին:

5) Զէբրայիլի եւ Զանգեզուրի գաւառների միջեւ Օլսչի չայի

20 գիւղերի եւ Բագար չայի մէկ գիւղի մասին :

6) Խ. Հայաստանի եւ Նախիջեւանի շրջանի միջեւ 5 գիւղերի մասին :

7) Մեղրիի եւ Օրդուրաքի վեհը 977 դեսեստին հողակտորի մասին Կարնեւանի եւ Գիւլիքի միջեւ :

8, 9 եւ 10 կէտերը աննշան խնդիրներ են Թիֆլիսի եւ Ղազախի գաւառների եւ Զաֆաքալայի միջեւ :

11) Բորչալուի - Լոռիի սահմանագծում :

12) Լեւինականի եւ Ալսալաֆի սահմանագծում :

Անդրկովկ. Գործ. Կամիտէի նախագահութիւնը իր 1928թ. 18 փետր. նիստում հաստատեց վերոյիշեալ յանձնաժողովի համաձայնութեան արձանագրութիւնը եւ որոշում հանեց նախագահութեան կողմից հաստատուած համաձայնութիւնը կենսագործելու միջոցների մասին : Այդ պատճառով նախագահութիւնը առաջարկեց Հոդային Յանձնաժողովին տեղերում անցկացնել եւ վերջացնել բոլոր վիճելի խնդիրները, իսկ հանրապետութիւնների Կենտրոնական Գործ. Կամիտէներին առաջարկեց յայտարարել շահագրգռող բնակչութեան, թէ որոշումը հանած է հանրապետութիւնների կառավարութիւնների նախագահների համաձայնութեան հիման վրա եւ վերաբնութեան ենթակայ չէ : Նայն որոշումով տեղերին առաջարկեց Հոդային Յանձնաժողովին ամէն տեսակ աջակցութիւն ցոյց տալ որոշումը կենսագործելու համար : Միաժամանակ նախատեսուած է ընկերային պաշտպանու-

թեան (պատիժ) չափը այն անձանց նկատմամբ, որոնք մեղաւոր կը լինեն 18 փետր. 1929 թ-ի որոշման խախտման համար :

Այս երկար մէջբերումը ցոյց է տալիս, որ Խորհրդային Վրաստանի եւ Ազրբէջանի համար վիճելի են հանրապետական Հայաստանի սահմանները եւ նոր են որոշուում այդ սահմանները՝ ի վնաս Հայաստանի, մինչդեռ հին շրջանին վիճելի համարուած Ախալքալաքի, Ղարաբաղի, Բորչալուի եւ Զուլֆայի հարցերը համարուում են փակուած դարձեալ ի վնաս Հայաստանի : Վրաց-ազրբէջանեան խորհրդային դիմակ հագած ազգայնականները իրականացնում են իրենց նախորդների երազած պահանջները, իսկ երեսներ նայն իսկ ունեցածը չի կարողացել պաշտպանել : Թէ որոշման ընդհանուր ոգին եւ թէ պատժի սպառնալիքի կէտը ցոյց են տալիս, որ փոփոխութիւնները կատարուում են այն մասեր պակուել եւ յանձնուել են հարեւաններին : Թէ ի՞նչքան եւ ինչպէս, գիրքը որոշ չի ասում, բայց կարելի է ենթադրել, որ բաւական հոգեք խլած են հողագուրկ Հայաստանից :

Բնորոշ է, որ Հայաստանի մէկ հինգերորդին վերաբերող այս վեճերի մասին ոչ մի խորհրդային թերթ ոչինչ չի տպել, մինչդեռ երբ տարիներ առաջ սահմանի մի քանի աննշան ուղղումներ էին արւել յօգուտ Հայաստանի Մեղրիի շրջանում, ամբողջ հայ խորհրդային մամուլը և արտասահմանի բոլորեւրոպեան թերթերը ահագին ազմուկ բարձրացրին :

Ն. ԲԱԴԱԼԵԱՆ